

բոլոր իրական ու ցեղական պարծանաց մէջ ինչպէս մոռցեր է մեծագոյնը, անոր առաքելական կամ վկայական ծագումը՝ Թող ինձ չթողու այդ գործը. վասն զի ես դրապաշտ մարդ եմ, և երազներու ետեւ չեմ վազեր:

Փակկնք: Քննադատու իւր կրկին յօդուածներով՝ իմ կարծեցեալ «անճշգոյթ ինքներս» փորձեց ուղղել իւր իրական անճշգոյթ ինքներսով. և այդ կերպով միշտ աւելի ամրացուց իմ տեսութիւնս հակառակ ատաքելական քարոզութեան ի Հայս: Ինձ կը մնայ այժմ սպասել իւր երկիցս խոստացած հաւաստման՝ թէ նախ քան զլուսաւորիչ եղած է ի Հայս «քրիստոնէական քարոզչութիւն մը»։ Բացատրութիւն՝ որ իւր չափաւորութեամբ, որոյ դէմ ես չեմ հակառակած (գործս, 165), կը հեռանայ նախկին ապացուցանելիքէն՝ թէ «ստոյգ բանասիրութեան լու-

սոյն առջև ո՛րչափ փայլ ու հաստատոյթն ունին մեր եկեղեցւոյ հիմնարկութիւնն նուիրաւ կան աւանդութիւններն»։ Պիտի խնդրեմ միայն՝ որ Պատ. Հայրը խնայէ թէ՛ իրեն և թէ՛ ինձ՝ կարդալու բանասիրաց բռնիքները, որոնք վըճառական արժէք չունին քննադատութեան առջև, և փառստեղ միայն զնէ իմ դրապաշտ մտքիս դիմաց:

Պիտի չպատասխանեմ Տիրայր Ե. Վ. Մարգարեանի, որ Միշակի մէջ (12 Յնս.) ջանաց ապացուցանել՝ թէ «Հայ. եկեղեցւոյ առաքելականութեան» մասին կարելի է լրագրի մ'երեք սիւները լեցնել՝ առանց բան մ'ըսելու: Կը խոստովանիմ թէ բանասիրութեան լեզուով անկարող եմ բացատրել միւսեք նոյն վարդապետին, ինչպէս կանխաւ ալ առիթ տուա ինձ հաստատելու:

Միլամ

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՎԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(ՈՒՐԱՐՏՈՒ-URARTU)

(Շարունակութիւն, տես Բազմավէպ 1928, էջ 282)

Գ. ՄԱՍ. ԿՐՕՆԵ ԵՒ ՄԵԱՊԱՅՑ:

Խալտիս էր Պիանասի (Վան) գերագոյն Աստուածը, և բնակիչները անոր Ժողովուրդը և զաւակները կը հաւատային ըլլալ Բաբելական մշակոյթի ազդեցութեան տակ Խալտիս սկսաւ յարաբերել ուրիշ աստուածներու հետ, Արտինիսի արեւ աստուածին, և Թեփպասի. այսպէս Բաբելոնի նման երրորդութիւն մը կազմեցին: Թեփպաս կամ Թեփուպաս (Թեփուպ ըստ Հիթիթ յիւստակարաններու), հաւանաբար փոխ առնուած է և կը հաւատարի Ասորիքի Հաղադ-Րիմօնի: Հիթիթ կրօնքը շատ հիւրասէր էր, բաւ է որ օտար աստուածները ընդունէին Խալտիսի գերագոյնութիւնը, կը հիւրընկալուէին: Այսպէս, Իւթաթ՝ Սայիս անուամբ ներկայացուած էր և Շա. միրամ անուան տակ կարեւոր դեր մը խաղաց վերջին Հայոց պատմութեան մէջ: Չոյզ Թագաւորները, խալտիքիս և Մենեան, Վանէն երկու մզոն ազդին փորագրեցին երկար արձանագրութիւն մը Մհերի-դրան Ժայռին վրայ, որ կը պարունակէր սակը գոհաբերութեանց և նուիրատուութեանց որ պիտի կատարուէին Թագաւորութեան տարբեր աստուածներուն: Ասոնց մէջ

կան նաեւ ընկեռած երկրորդու աստուածներ, որն անունները և ուրիշներ ալ, ինչպէս Տոււրաս, որոնք Թոր Արիական քաղաքները կը ներկայացնէին: Նոյնպէս յիշուած են, Լուսին, Զուր և Երկիր աստուածները. որմէ կրնանք հետեցնել թէ գեոեքուն և աղբիւրներուն ալ պաշտամունք կը մատուցուէր: Խալտիական աստուածները՝ պէտք է ըսել Խալտիսի ընտանիքը՝ բազմաթիւ էին:

Նուիրատուութիւնք բնականաբար կը ներփառէին նաեւ գինին. որթը Հայաստանի մէջ բնիկ տունի էր, երկրին սուրբ ծառն էր. և Թագաւորաց կողմէ որթենիի տնկելու բացառիկ կրօնական արարողութիւն մը կը սեպուէր. բայց չ'երեւար հետքը Սուրբ քարին որ այնքան մեծ դեր մը խաղաց փոքր Արտի կրօնից մէջ:

Տաճարները կը նմանէին Ասորականներուն. Խալտիսի տաճարին յառաջամասին մէջ պատ, կերը դրուած է Մուսասիրի մէջ բարձրաքանակ, դակին վրայ, Սագոնի Խորսապատի պալատին մէջ: Դրան իւրաքանչիւր կողմը նիզակ մը գծտեղուած է, ուղղաձիգ, սիւներուն առջեւ՝ որոնց տանիքը վեր կը բռնեն, և ուրիշ նիզակ մ'ալ

կը կազմէ կատարը նոյն ինքն հակող տանիքին։ Նիդակներուն ալ և ձախ կողմը երկու վահան, ներ կախուած են պատին վրայ, մինչ դրան առջեւ գետնողւած են պղնձէ երկու խոշոր աման, ներ, հաստատուած պատուանդաններու վրայ։

Հին աստուածներու սովորութիւնները վերապրեցան շինդ-եւրոպական շայտ մօտ։ Մովսէս խորհնացի մեզ կը պատմէ թէ ինչպէս իմ շա՛ղաւորին՝ Արա «Գեղեցիկին» տնէնացած էր Ասորեստանի Շամիրամ թագուհին։ Բայց Արա կը մերժէր անոր առաջարկը որով Շամիրամ Հայաստան կ'արշաւէ, բանակի մը զուլիսը անցած, ստիպելու զինքը որ կատարէ իր կամօքը։ Ահեղ ճակատամարտ մը տեղի կ'ունենայ, որուն ընթացքին Արա կը սպաննուի և Ասորեստանի թագուհին կը նետուի դիակին վրայ։ և վշտի սաստկութենէն կը խնդրէ աստուածներէն որ զինքը վերապրենեն։ Եւ պատմութիւնը կը շարունակէ ըսելով որ «Արաից աստուածները» զայն վերապրեցուն։ Սակայն ըստ քրիստոնեայ պատմագրաց առիկա լոկ թագուհւոյն հընարքն էր։

Արաից աստուածներուն մասին կ'իմանանք աւելի յետին շրջանէ մը, փաստոտ Բիւզանդացւոյ էնէրէն, որ կը նկարագրէ Քրիստոսի Դ. դ. դար Հայոց հաւատքը, թէ քաջ մարդիկ որունց պատերազմի ընթացքին մեռած են, պիտի վերակենդանանան անոնց միջոցաւ, և զեն ասկէ կանուխ շրջանի մէջ ալ, Դ. դ. դարուն մեր թուականէն առաջ Պետաբրքոսի ծանօթ էր իւր անուամբ Արմենոսի որդին, որ սպաննուած էր պատերազմի մէջ բայց դարձեալ աշխարհ վեւրադարձաւ, ստորին աշխարհին մէջ կարճ ատեն մնալէ վերջ։ Ասիկա հին պատմութիւնն է գեղեցիկ թամուզի, սիրուած իշխարէն և սպաննուած վարազէն, որուն համար իշխար հանգէս իշաւ և մեռած աստուածը ողջ աշխարհ վեւրադարձուց։ Պատմութիւնը զեռ կը կանխէ, մինչև Բաբելոնի Սումերեան շրջանը։ և Արաից աստուածներուն մէջ մեզք պէտք է տեսնեք Բաբելական Արալուն «Երկիրը որվէ ոչ մէկը կը վերադառնայ»։ Գրէսիտի ասորական «Պատմութեան» մէջ, Արու և Արալէզ եղբ. են Ասորի թագաւորներ, Արիտ կամ Արալիտ «Արու աստուծոյ», Չամբքոսի յաշորդ, եւ ճանչցուած իբր նիխուէական Նիոս որդի Շամիրամի։

Վանեան գեղարուեստը և մշակոյթը ազգուած են՝ իրենց գրեականի պէս՝ Ասորեստանէն։ Եւ այց ձեւաւորուած գծերով՝ որոնք մեզ կը յիշեցնեն հեթանոսական կարկէմիչի և Պողոս

Քէօի արուեստը։ Շէնքերը մեծ մասամբ քարէ են թէ՛ զարդարուած և թէ՛ քաղաք, բազմաթիւ և խնամքով կազմուած քառակուսիներ, ճիշտ հակառակը Ասորական յատկանիշ եղող մեծ շաւիերով արտագրութեանց. հազուադէպ եղած է կոմիսարի գործածութիւնը, քանի որ մինչև ցայժմ կոմիսարով շինուած չէիք միայն թոփրագ Գալէի ծանօթ չէինք է որ կառուցուած է ոչ լաւ թրծուած կոմիսարներով։ Մեզ կը թուի թէ կողմիւնը գործածուած է պարզապէս նմանելու համար Բաբելական ձեւին։ Միւս կողմէ ժայռափորութիւնը տարածուած էր և լէնման-Հաուրթի դիտողութեան համաձայն, Մենագլիտի մէջ՝ Ռուսասի ժայռափոր բերդերուն դրան կլոր կըտրուած տանիքը լոյս կը սփռէ Պոնտական թագաւորաց ժայռափոր գերեզմաններուն ճարտարապետական ծագման վրայ։ Ապրողներուն տուներուն նման մեռնողներուն գերեզմաններն ալ ժայռերու մէջ պեղուած էին։ Վանեան ճարտարապետութիւնը կը սիրէր պատերը կառուցանել փոխի ի փոխ հերմակ և սեւ քարերու չերտերով, ճիշդ ինչպէս որ Խալապկան կանխագոյն շրջանի եկեղեցիները ձեւաւորուած էին։ Վանեանց կը զարգարէին նաեւ պալատներուն յատկը տեսակ մը խճաքարով, որ կը բաղկանար տարբեր գոյներէ կազմուած կլոր քարերէ։ Իսկ իրենց քառանկերը լոկ ընդօրինակութիւն էին Ասորեստանեանին։

Մետաղագործութեան մէջ Վանի բնակիչք չառ ճարտար էին, ինչպէս կարելի է հնթագրել երկրին հանքային հարստութեանցը համար։ Ոսկի, արծաթ, պղինձ, և երկաթ, բոլորն ալ կը գործածուէին։ Բայց պղինձէ եղած աշխատանքները մասնաւորաբար առաջնակարգ էին։ Թեւաւոր առիւծ մը՝ ընդհիւղուած աչքերով, որ գտնուած է Թոփրագ Գալէի մէջ, օրինակի համար, գեղարուեստական առաջնակարգ գործ մըն է։ Բայց ասոր մէջ ալ կ'երեւի Ասորեստանեան ներշնչումը. ձոյլ պղինձէ արձանը որ գտնուեցաւ զուտ Ասորեստանեան է, ինչպէս նաեւ Ասոր աստուածին վանեան օրինակը, ուր թեւաւոր աստուածը արեւին սկաւառակէն դուրս կ'ելլէ։ Թոփրագ Գալէի մէջ գտնուած պղինձէ աշտանակ մը նշանակելի կերպով կը նմանի եսուրականներուն։

Երկաթէ իրերը հասարակ են, հիւսիս արեւելեան փոքր Ասիոյ երկաթ հանքերը կը դիրքընցնէին այդ մետաղին գործածութիւնը երկրին այդ մասին մէջ և համեմատաբար աւելի կանուխ շրջանի մէջ. հաւանական ալ է որ Սարգոնի օրով

պղինձի տեղ երկաթի նախապատուութիւն տրուած ըլլայ, և երկաթը թագաւորին հիւսիսային արշաւանքներուն արգասիքն է:

Պիանսօի բրուտագործութիւնը կը պատկանի փոքր Ասիոյ կանխագոյն շրջանի արուեստին, որուն կը հանգիպինք Աստուրի և Նիուէի անցքերուն ատեն: Լաւ շինուած և ունեւիթներով սափորներու ստեղծ կը պատահինք: Հասարակ առօթները սեւ կաւէ են, յղկուած և փայլուն. բայց նշանակելի թիւ մը կը կազմեն այն առանները, որոնք շատ կը նմանին փոփոյի մէջ գտնուածներուն, և որոնց յատկանիշն է կարմիր կիտուածներ ունենալը. ասիկա մեզ կը յիշեցնէ Վասիական անօթները: Գիտի և իւր կը պահուէին մեծ կարասներու մէջ, բարձրաքանդակ հիւսկէն դրուագներով նկարազարդ և այդ դէպքերու պատմութիւնն ալ նշանակուած բեւերազրեցով: Ասոնց նման կարասներ հողէն հանուած են նաեւ Պողազ ֆէօյ. երբեմն ալ կինդանակերը զարդեր ազուցուած էին անոնց շրթներուն:

Վանեան հագուստը ցուրտ կլիմայի հագուստ էր: Ժողովուրդը կը կրէր կօշիկ մը՝ որ հազիւ ոտքերուն կէտը կը ծածկէր. կը հագնէր վերարկու և հաւանաբար ներքնազարտիք, իսկ զինուորները իրենց զուիւրը կը պաշտպանէին սաղաւարտով. ասոնցմէ շատերը մահիկներ ունէին Յունաց կամ կարկէմիլի Հիթիթներուն սաղաւարտներուն նման:

Ամփոփելով, կը տեսնենք արդարեւ, որ հագուստի, զեղարուեստի և բրուտագործութեան տեսակէտով ընդհանուր նմանութիւն մը կար Հայկական բարձրաւանդակի բնակչութեան, և փոքր Ասիոյ բնակչութիւններուն մէջ, այն շրջանին՝ երբ Վանեան թագաւորութիւնը բարձրագու և ինկաւ:

ԹԳՎ. Յ. ՔԻՒՐՏԵՆՍ

Ֆ. ՆԱՆՍԷՆԻ

«ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԵՐՁԱՆՈՐ ԱՐԵՒԵԼՔ»



Ֆ. Նանսէն իրատարակած է գիրք մը «Հայաստան և Մերձաւոր Արեւելք» մտրվեկերէմ, որոյ ֆրանսերէմ թարգմանութիւնը՝ կատարուած Առաջ Օտեւեմէ, լոյս տեսած է Մասիս տպարանէմ. Այս գիրքը արդիւմք է Ազգերու Ժողովի կողմէ որոշուած Յամձմաժողովիմ՝ որու պետը Նանսէն էր, Հայաստան ըրած ուղեւորութեամ, քմնելու հրկրիմ մէջ ոռոգմամ կարելիութիւն և զամագամ եղամակմըմ, մասմաւորապէս Մարդարապատի ամընք դաշտամասիմ համար, Հիդրմակը սակայմ այս գրքիմ մէջ միայմ ոռոգմամ ձեռմարկիմ վրայ չի խօսիր, այլ իր բովանդակ ուղեւորութեամ պատմութիւնը կ'ըմէ, սկսեալ մեկմումի կէտէմ՝ Թրիէստէմ միմչե Պ. Պրիս Ժամմ. մումը և ապա Վրաստան. ասոր կը կցէ վրաց պատմութեմէմ դրուագմեր մը. այս բոլորը կը գրաւեմ հատորիմ 118 էջերը. Ապա կը սկսի պատմութիւնը Յամձմաժողովիմ Հայաստան ուղեւորութեամ և քմնակամ պտոյտմերու, միմչե 251 էջ, և հուկը կը յաւելու երկու առամձիմ զուիւրմերու մէջ, Հայաստանի պատմութեամ ամփոփումը, և Հայաստան արդի Ժամմակմերու (էջ 368):

Գրքիմ ամէմհատըքրքրակամ մասը ուղեւորութեամ մերկայացում է Հայ Համըրապետութեամ հողամասիմ մէջ, Նանսէն տմտեսակամ ու երկրագործակամ տեսակէտէմ զատ, ամընքը երկերը՝ ուր պտտած է, կը քմէ մարդարամակամ, ազգագրակամ, զեղարուեստակամ դիտումով: տեղերու մկարագրութիւնը կ'ըմէ, տիպարմեր կը մշմարէ, բարքեր ու սովորութիւնմեր վեր կը համէ. կը զբաղի միամգամայմ արուեստի հիմ գործերու քմնութեամք, կրթակամ հաստատութեամք տեսութեամք, Օտարէ մը մերկայացուած մոր Հայաստանի արդար պատկերմ է, որ ամհրաժեշտ է տեսմել՝ ճիշտ գաղափար մը կազմելու համար մեր երկրիմ կացութեամ:

ԽՈՐ.

